ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 17

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2018 թվականի ապրիլի 10-ից մինչև ապրիլի 16-ը Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում իրականացված վարժական հավաքներին մասնակցել են նաև Դդմաշեն համայնքի թվով 3 բնակիչներ, որոնք այդ ընթացքում ցուցաբերել են մարտական պատրաստության և զինվորական կարգապահության բարձր ցուցանիշ:

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Անահիտ Սարիբեկի Սողոմոնյանը, Արծրուն Վահանի Մինասյանը, Կիմա Գարեգինի Ներսիսյանը, Նշան Սուրենի Առաքելյանը և Լաուրա Ալբերտի Սարգսյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2018 թվականի ապրիլի 10-ից մինչև ապրիլի 16-ը Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում իրականացված վարժական հավաքներին մասնակցած, այդ ընթացքում մարտական պատրաստության և զինվորական կարգապահության բարձր ցուցանիշ ցուցաբերած Դդմաշեն համայնքի թվով 3 բնակիչների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման նպատակով համայնքի բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.

1/ Վահագն Ավետիքի Ստեփանյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
2/ Գևորգ Բեգինի Շութոյանին – 20.000 /քսան հազար/ դրամ

3/ Արմեն Համլետի Հայրապետյանին – 20.000 /քսան հազար/ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 60.000 /վաթսուն հազար/ դրամ

2. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Անահիտ Սարիբեկի Սողոմոնյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
2/ Արծրուն Վահանի Մինասյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
3/ Կիմա Գարեգինի Ներսիսյանին – 40.000 /քառասուն հազար/ դրամ
4/ Նշան Սուրենի Առաքելյանին – 50.000 /հիսուն հազար/ դրամ
5/ Լաուրա Ալբերտի Սարգսյանին – 50.000 /հիսուն հազար/ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ - 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ

3. Գլխավոր մասնագետին - սույն որոշումն ընդունել ի գիտություն և կատարել համապատասխան գործարքներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -1

1. Ավետիսյան Տիգրան
2. Կիրակոսյան Հրահատ
3. Ղարիբյան Էդիկ
4. Մելքոնյան Ձավեն

1. Հովհաննիսյան Գուրգեն

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան